

## Տ. ԶՈՀՐԱՊ ԱԲԵՂԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

(ավազանի անունը՝ Հրանտ)

Ծնվել է 1978 թ. հոկտեմբերի 29-ին Էջմիածին քաղաքում:

1984-1994 թթ. սովորել և ավարտել է Էջմիածին քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվան № 1 միջնակարգ դպրոցը:

1994 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան և այն ավարտել 2000 թ.:

2000 թ մարտի 2-ին, Վարդանանց տոնին, ձեռամբ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի ձեռնադրվել է սարկավագ:

2000 թ. հունիս-նոյեմբեր ամիսներին, Նորին Սրբության բարձր տնօրինությամբ, աշխատել է ՔԴՔԿ-ում որպես մշակութային բաժնի պատասխանատու, ապա՝ «Շողակաթ» հեռուստատեսությունում:

2000-2001 թթ. Հայաստանի Ամերիկյան Համալսարանում հետևել է «Կառավարման դասընթացներ ճեմարանականների համար» ծրագրին:

2001 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին սովորել է Ժնևի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետին կից Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Բոսսե» էկումենիկ ինստիտուտում:

2001 թ. դեկտեմբերի 29-ին պաշտպանել է ավարտաճառ «Գևորգ Սկևռացին և նրա «Գործք Առաքելոցի մեկնությունը»» թեմայով՝ ստանալով «գերազանց» գնահատական:

2002 թ. մարտի 1-ից նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներկայացուցիչը «Շողակաթ» հեռուստատեսությունում:

2002 թ. ապրիլի 28-ին, Սուրբ Խաչի երևման տոնին, ձեռամբ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա: